«ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔ»

ԾՐԱԳԻՐ

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքի նկարագրությունը 3
Ծրագրի ընդհանուր նպատակը 5
Ծրագրի հիմնախնդիրները 7
Ծրագրի իրականացման նպատակը 8
Ծրագրի իրականացման արդյունքներին ուղղված անհրաժեշտ միջոցառումները 9
Բնապահպանական ծրագիր 12

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2021 թվականի «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածի 2.3-րդ մասի «Արմավիրի մարզի համայնքներն ու բնակավայրերը» ցանկի 3-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 102-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն համայնքի միավորման ու վերակազմակերպման արդյունքում ձևավորվեց Մեծամոր խոշորացված համայնքը (այսուհետ՝ համայնք): Միավորման արդյունքում Մեծամոր համայնքը բաղկացած է մեկ քաղաքային և 30 գյուղական բնակավայրերից՝ Ալաշկերտ, Ամասիա, Այգեշատ, Արազափ, Արգավանդ, Արմավիր, Արտաշար, Արևիկ, Բամբակաշատ, Բերքաշատ, Գետաշեն, Եղեգնուտ, Երասխահուն, Զարթոնք, Հայկավան, Մարգարա, Մրգաշատ, Նալբանդյան, Նոր Արմավիր, Նոր Արտագերս, Նոր Կեսարիա, Նորապատ, Շենավան, Ջանֆիդա, Ջրաշեն, Վարդանաշեն, Տանձուտ, Փշատավան, Ակնալիճ, Տարոնիկ:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքը հիմնադրվել է 1969 թվականին, երբ սկսվել են հայկական ատոմային էլեկտրոկայանի շինարարական աշխատանքները: Սկզբում այն անվանվել է որպես քաղաքատիպ ավան, այնուհետև 1995 թվականին ստացել է քաղաքի կարգավիճակ :

Քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 855 մ բարձրության վրա: Երևան քաղաքից գտնվում է 38 կմ, իսկ մարզկենտրոն Արմավիր քաղաքից 6 կմ հեռավորության վրա: Քաղաքում գործում է թվով 2 դպրոցական, թվով 3 նախադպրոցական հաստատություններ, մշակույթի տուն, մարզադպրոց, արվեստի դպրոց, գրադարան, բժշկական կենտրոն, փոստային բաժանմունք, համայնքային հյուրանոց,գործում են թվով 2 հասարակական կազմակերպություններ, Հայ Առաքելական եկեղեցի և այլ հասարակական օբյեկտներ: Մեծամոր քաղաքը ունի քաղաքաշտպանության համար նախատեսված հիսուն թաքստոց:

Ժողովրդագրություն

2022 թվականի տարեսկզբի դրությամբ Մեծամոր քաղաքային բնակավայրի մշտական բնակչությունը կազմել է 12.531 մարդ, քաղաքը զբաղեցնում է 910,78 հա հող տարածք: Համայնքի ընդհանուր տարածքը կազմում է 32.622,07 հա, իսկ բնակչությունը՝ 79.409 մարդ, այդ թվում՝

- Տղամարդկանց թիվը – 37.722 մարդ
- Կանանց թիվը – 39.942 մարդ
- Թոշակառուների թիվը – 8.568 մարդ

- Արցախի Հանրապետությունից տեղահանվածների թիվը – 254 մարդ
- Միակողմանի ծնողազուրկ երեխաների թիվը – 392 մարդ
- Երկկողմանի ծնողազուրկ երեխաների թիվը – 6 մարդ
- Հաշմանդամների թիվը – 1.441 մարդ
- Ընտանեկան նպաստի պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը – 1.107 ընտանիք
- Արցախյան 1-ին պատերազմում, քառօրյա և 44 օրյա պատերազմում զոհվածների թիվը - 141 մարդ
- տնային տնտեսությունների թիվը – 18.056 տնային տնտեսություն

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի ընդհանուր նպատակն է
բարելավել Մեծամոր համայնքի բնական միջավայրը,
վերականգնել եւ ամրապնդել համայնքի բնակչության առողջությունը

Ծրագրի նպատակն է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն պետական բյուջեից, Մեծամոր համայնքին կատարվող մասհանումների գումարներով լուծել համայնքում առկա բնապահպանական խնդիրները:

Ծրագիրը ներառում է.

1. Մեծամոր համայնքի բնապահպանական և շրջակա միջավայրի պահպանությանն ու վերականգնման միջոցառումներ:
2. Համայնքի բնակչության առողջության պահպանմանը նպատակաուղղված միջոցառումներ, որոնց անհրաժեշտությունը պայմանավորված է հիմնականում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գործունեությամբ:

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ
ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գործունեության ազդեցությունը

Հայկական ԱԷԿ-ը բաղկացած է երկու էներգաբլոկներից՝ ՋՋԷՌ-440 տիպի (Բ-270 մոդելի) ռեակտորներով: ՀԱԷԿ-ի առաջին էներգաբլոկը արդյունաբերական շահագործման հանձնվեց 1976թ-ին, իսկ երկրորդը՝ 1980թ-ին: Էներգաբլոկների դրվածքային հզորությունը կազմում է 407,5ՄՎտ, շահագործման նախագծային ժամկետը՝ 30 տարի: ԽՍՀՄ մինիստրների խորհրդի որոշմամբ Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո 1989թ. փետրվարին և մարտին կանգնեցվեցին №1 և №2 էներգաբլոկները: ԽՍՀՄ փլուզմանը հաջորդող քաղաքական կատակլիզմները 1990-

1993թթ. հանգեցրեցին Հայաստանի շրջափակմանը և որպես դրա հետևանք՝ հանրապետության ծանր էներգետիկ ճգնաժամի: Ստեղծված իրավիճակով էր պայմանավորված միակ ընդունելի որոշումը՝ վերսկսել Հայկական ԱԷԿ-ի աշխատանքը: 1993թ. Հայաստանի կառավարությունն ընդունեց ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի շահագործումը վերսկսելու վերաբերյալ որոշում: Նորոգման ու վերականգնման աշխատանքները և անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումներն իրականացնելուց հետո 1995թ. նոյեմբերին №2 էներգաբլոկը միացվեց էներգահամակարգին:

№1 էներգաբլոկը գտնվում է երկարատև կանգի ռեժիմում: Էներգաբլոկի վերագործարկում չի նախատեսվում:

Հայկական ԱԷԿ-ի №2 բլոկի վերագործարկման շնորհիվ Հայաստանը ծանր էներգետիկ ճգնաժամից հետո անցավ շուրջօրյա էլեկտրամատակարարման: Բացի այդ, բլոկի շահագործումը վերսկսելուց հետո հանրապետութունը ձեռք բերեց բավականին բարձր էներգետիկ անկախություն վառելիքի ներկրվող տեսակներից:

Ատոմային էներգետիկան հանդիսանում է Հայաստանում էներգիայի հիմնական աղբյուրներից մեկը և որոշիչ դեր է խաղում ազգային էներգամատակարարման գործում:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն արդյունաբերական օբյեկտ է, որտեղ Հայկական ԱԷԿ-ի մասնաբաժինը հանրապետությունում արտադրվող էլեկտրաէներգիայի ընդհանուր արտադրության մեջ կազմում է ավելի քան 40%, որին մասնակցում է Մեծամոր համայնքում բնակվող մասնագետների մի մասը : ՀԱԷԿ-ը հանդիսանալով բարձր արտադրական ռիսկով օբյեկտ, առաջնահերթ ենք համարում կարևորություն տալ մարդկային գործոնին, մասնավորապես աշխատողների ֆիզիկական և հոգեկան առողջությանը: Ելնելով դրանից առաջարկում ենք պետության կողմից մասհանված գումարը օգտագործել ՀԱԷԿ-ից 4,5 կմ հեռավորությունում գտնվող Մեծամոր քաղաքում բարեկարգ այգի վերակառուցելու նպատակով առաջնորդվելով մաքուր խմելու ջուր, թթվածնով հագեցած մաքուր օդ և անվտանգ շրջակա միջավայր կարգախոսով:

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրի հիմնական խնդիրներն են. Ծրագրի հիմնախնդիրների լուծմանն ուղղված գործողություններ

1. Աջակցել տարածաշրջանի և համայնքի բնապահպանական խնդիրների լուծմանը:
2. Բարեկարգել համայնքը և բարձրացնել սպասարկման ոլորտում իրականացվող ծառայությունների որակը:
3. Կառուցել ճեմուղիներով պուրակ՝ բնակչության հանգիստն ապահովելու նպատակով:
4. Ծառատունկերի, կանաչապատ տարածքների վերականգնման միջոցով բարելավել համայնքի բնապահպանական վիճակը, ապահովել հնարավորինս առողջ մթնոլորտ, պահպանել կենսաբազմազանությունը:
5. Տեղադրել կոշտ-կենցաղային թափոնների համար նախատեսված կափարիչով աղբարկղեր:
6. Կառուցել բնական կամ արհեստական խոտածածկով խաղահրապարակ:
7. Կոնսերվացնել կոշտ կենցաղային թափոնները՝ պահպանելով վտանգավոր նյութերի թույլատրելի նորմատիվները ջրային, օդային ավազաններում և հողում:
8. Կանխարգելել հեղեղավտանգ իրավիճակները:
9. Համայնքում տեղադրել էներգախնայող լուսատուներ՝ արտանետումները նվազացնելու և տնտեսում կատարելու նպատակով:
10. Իրականացնել երեխաների առողջության ամրապնդմանն ուղղված միջոցառումներ:
11. Աջակցել Մեծամոր համայնքի առողջական խնդիրներ ունեցող անձանց՝ տարբեր հիվանդությունների կանխարգելման, առողջության ամրապնդման և պահպանման նպատակով:
12. Իրականացնել համայնքի նորածինների առողջության պահպանմանն ուղղված միջոցառումներ:
13. Կարևորելով առողջ ապրելակերպի գաղափարը՝ համայնքի երեխաների և մեծահասակների համար մարզահրապարակներ կառուցել:
14. Ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ (կրծողասպան և միջատասպան աշխատանքներ) համայնքի կոշտ կենցաղային թափոնների աղբավայրում:

15. Նախատեսվում է նաև հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև սակավաշարժ խմբերի հասանելիության ապահովման լրացուցիչ միջոցառումների՝ թեքահարթակների կառուցում , ինչպես նաև ճոճանակների տեղադրում նախատեսված հաշմանդամություն ունեցող անձանց համար: Հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի, բժշկական և սոցիալական սպասարկման կազմակերպումը, հաշմանդամություն ունեցող անձանց կրթության, մասնագիտական ուսուցման կազմակերպումն ու զբաղվածության խթանումը

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի իրականացման նպատակն է պահպանել, վերականգնել եւ բարելավել համայնքի բուսական, ջրային եւ օդային տարածքները, իրականացնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գործունեության հետևանքով բնակչության առողջական խնդիրների լուծմանն ուղղված վերականգնողական միջոցառումներ:

Ծրագրի արդյունքում նախատեսված համալիր միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա որոշակի չափով բարելավել և պահպանել համայնքի բուսածածկ, ջրային և օդային տարածքների ներկա վիճակը, կանխարգելել արտակարգ իրավիճակները, բարելավել քաղաքացիների կենցաղային պայմանները, վերականգնել բնակչության առողջությունը, կանխարգելել հիվանդությունների առաջացումը և ստեղծել շրջակա միջավայր բնակիչների հանգստի համար :

ԾՐԱԳՐԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրից ակնկալվող արդյունքներին հասնելուն ուղղված նպատակային գործողություններ.

1. Կբարելավվեն համայնքի սանիտարահիգիենիկ պայմանները:
2. Կտեղադրվեն մեծ և փոքր աղբարկղեր:
3. Ծառատունկերի և կանաչապատ տարածքների ընդլայնման շնորհիվ կբարելավվի համայնքի օդային ավազանը, կձևավորվի բարենպաստ միկրոկլիմա:
4. Մեծամոր համայնքի բնակչության ակտիվ հանգստի ապահովման համար կկառուցվի խաղահրապարակ՝ արհեստական կամ բնական խոտածածկով:

5. Կապահովվի կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի սահմանված կարգով շահագործումը, կնվազի մթնոլորտի աղտոտվածության աստիճանը:
6. Կբարելավվի համայնքի հեղեղատարների վիճակը՝ նվազեցնելով հեղեղումների վտանգը:
7. Կնվազեն CO2 գազի արտանետումները:
8. Համայնքի բնակչության համար առողջ ապրելակերպ վարելու և հանգստի հնարավորություն կստեղծվի :
9. Օժանդակություն կցուցաբերվի համայնքի բնակչության առողջության պահպանմանը, ամրապնդմանն ու հիվանդությունների կանխարգելմանը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ծրագրի ակնկալվող արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Մեծամոր համայնքի համայնքապետարանի հարակից տարածքը դարձնել պուրակ, հանգստի կանաչ գոտի: Նախատեսվում է կառուցել չորսվակներով /բրուսչատկայով/ ճեմուղիներ, ապահովել լուսավորությունը մոտ 400 ձևավոր էլեկտրասյուներով և եռաթև լուսատուներով /3 շարքով 800 մետրի վրա/, տեղադրել պուրակին համահունչ մոտ 100 մետաղյա նստարաններ / 2 շարքով/:
- Մեծամոր համայնքի բարեկարգմանն ուղղված աշխատանքների համար նախատեսվում է վերականգնել և ընդլայնել տվյալ տարածքի կանաչապատ տարածքը:
- Զբոսայգում նախատեսված են մինչև 50 փոքր և 50 հատ մեծ կափարիչով մետաղական աղբարկղերի ձեռքբերման և տեղադրման աշխատանքներ: Աղբարկղերի տեղադրումը կապահովի զբոսայգու մաքրությունը. ինչպես նաև աղբը կենդանիների կամ քամու միջոցով տարածումը շրջակայքում:
- Մեծամոր համայնքում մանկական խաղահրապարակները պարբերաբար պետք է վերանորոգվեն: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է զբոսայգում կառուցել/ տեղադրել մինչև 4 տարեկան երեխաների համար նախատեսված անցում կամրջակով, աստիճաններ, ավազարկղեր, մինչև 5-10 տարեկան երեխաների համար՝ ճոպաններով

ցանցեր և ճանապարհներ, պարուրաձև թեքություններ, ոլորուն բլուրներ, իսկ մինչև 10-15 համար՝ սպորտային զուգափայտեր և սանդուղքներ:

➢ Նախատեսվում է նաև հաշմանդամություն ունեցող անձանց , ինչպես նաև սակավաշարժ խմբերի հասանելիության ապահովման լրացուցիչ միջոցառումներ՝ թեքահարթակների կառուցում: Անհրաժեշտ է հատկապես ընդգծել, որ մատչելի ֆիզիկական միջավայրն օգտակար է ոչ միայն հաշմանդամություն ունեցող մարդու, այլ բոլորի համար, և այն ենթադրում է ոչ միայն շինությունների մատչելիությունը, այլ նաև մայթեզրերի հարմարեցումը և հետիոտների շարժը սահմանափակող այլ խոչընդոտների վերացումը: Միջավայրը մատչելի պետք է լինի ոչ միայն տեղաշարժման, այլ նաև տեսողական, լսողական, և այլ խնդիրներ ունեցող մարդկանց համար:

ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ծրագրի գնահատման չափանիշ կարող է լինել՝

1. Բնապահպանական ծրագրից օգտվող շահառուների թվի աճը:
2. Համայնքի սանիտարահիգիենիկ վիճակի բարելավում:
3. Ընդլայնված և վերականգնված կանաչապատ տարածքներ:
4. Համայնքի փողոցների աղբահանության աշխատանքների բարելավում, կոմունալ ծառայությունների որակի բարձրացում:
5. Արտակարգ իրավիճակների կանխարգելում, բնակչության անվտանգության ապահովում:
6. Բնակիչների ակտիվ հանգստի կազմակերպում:
7. Համայնքի բնակչության առողջական վիճակի պահպանում, ամրապնդում:
8. Բնակչության մեջ առողջ ապրելակերպի գաղափարի արմատավորում, ֆիզիկական կուլտուրայով զբաղվելու մատչելիության ապահովում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

«ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ»

ԾՐԱԳԻՐ N 1

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊՈՒՐԱԿԻ ԵՎ ՃԵՄՈՒՂԻՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ

Հավելված N 1

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԾՐԱԳԻՐ – N 1

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊՈՒՐԱԿԻ ԵՎ ՃԵՄՈՒՂԻՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ

	ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ	Համայնքում հանրային հանգստի և կանաչ գոտիների ստեղծում	«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ աշխատանքի հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող Մեծամոր քաղաքային համայնքին պետական բյուջեից մասհանման կարգով բնապահպանական միջոցառումների իրականացման անհրաժեշտությունն է: Ծրագրեր իրականացնելով անհրաժեշտ է հնարավորինս նվազեցնել վնասակար ազդեցությունների ենթարկվող համայնքի ազգաբնակչությանը և բնությանը պատճառվող վնասները ավելացնելով համայնքում կանաչապատ տարածքները: Համայնքի բնակիչների համար հանգստի կազմակերպման հնարավորություն

ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ	«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքին հատկացվող 2021 և 2022 թվականներին Մեծամոր համայնքի կողմից բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով ծրագրային հայտեր չեն ներկայացվել, ուստի 2021 թվականի համար հաշվարկված գումարը կազմում է 2 435 900, իսկ 2022 թվականի համար՝ 7 195 700 ՀՀ դրամ: 2023 թվականի համար «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական հարկից մասհանման գումարի հաշվարկված չափը կազմում է 18 374 570 ՀՀ դրամ:	
ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	Համայնքի բնակչության համար հանգստի կազմակերպման ապահովում	Ծրագրի իրականացման արդյունքում համայնքի բնակիչները կունենան գեղեցիկ, բարեկարգ կանաչապատ պուրակ և հանգստի անցկացման համար լիարժեք հնարավորություն

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	Իրականացնել պուրակի և ճեմուղիների կառուցման աշխատանքներ, Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ նախահաշվային արժեքը՝ 28,00617 մլն. դրամ է, նախագծա-նախահաշվային աշխատանքներ՝ գտնվում են ընթացքի մեջ : Ընդամենը՝ 28,00617 մլն. դրամ	Ծրագրի իրականացման արդյունքում կկառուցվեն չորսվակներով /բրուսչատկա/ ճեմուղիներ, լուսավորությունը կապահովվի ձևավոր էլեկտրասյուներով և եռաթև լուսատուներով, կտեղադրվեն պուրակին համահունչ մետաղյա նստարաններ: Զբոսայգին կլինի ծառերով և ծաղիկներով հարուստ: Կկառուցվի երեխաների համար նախատեսված խաղահրապարակ: Կկառուցվի արգելապատնեշ զբոցայգու այցելուների պաշտպանության համար, հաշվի առնելով Երևան-Արմավիր մայրուղու հարակից տարածքում գտնվելու հանգամանքը :
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՆՅՈՒԹԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ		Մեծամոր համայնքի համայնքապետարանի հարակից տարածքում պուրակի և ճեմուղիների կառուցման և կահավորման համար պահանջվող նյութական արժեքների ձեռք բերումը կկատարավի սահմանված կարգով համաձայն տեխնիկական պայմանների հաշվարկման միջոցով՝ ՀՀ Կառավարության կողմից հաստատված նորմաների հիման վրա նախագիծ-նախահաշիվ ձեռք բերելուց հետո :

Համաձայնեցված է
ՀՀ Շրջակա միջավայրի նախարար

_____

« » _____ 2022թ.

Հավելված
Մեծամոր համայնքի 2023թ.
Բնապահպանական ծրագիր

Մեծամոր համայնքի 2023 թվականի բնապահպանակ ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները

Մեծամոր համայնքի 2023 թվականի բնապահպանակ ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները

N	Միջոցառման անվանումը	Գումարը /հազ. դրամ/	Համամասնությունը %
1	**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**		
1.1	ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊՈՒՐԱԿԻ ԵՎ ՃԵՄՈՒՂԻՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ		
	Ընդամենը		